ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ

- **ՔԱՂԱՔ /ԵՐԿԻՐ/ԺԱՄԿԵՏ**

Դունհուան (ՉԺՀ), սեպտեմբերի 25-29-ը

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Դունհուանում կայացած երրորդ միջազգային մշակութային ԷՔՍՊՈ-ի ծրագրային միջոցառումներին:

2018թ. սեպտեմբերի 25-29-ը մեկնեցի Չինաստան՝ որպես ՀՀ մշակույթի նախարարության պաշտոնական ներկայացուցիչ և պատվավոր հյուր՝ ներկա գտնվելու Գանսյու նահանգի Դունհուան քաղաքում կայացած երրորդ միջազգային մշակութային ԷՔՍՊՈ-ի ծրագրային միջոցառումներին:

Սեպտեմբերի 25-ին մասնակցեցի Երրորդ միջազգային մշակութային ԷՔՍՊՈ-ի կազմկոմիտեի կողմից կազմակերպված պաշտոնական ընթրիքին, որից հետո առանձնազրույց ունեցա ՉԺՀ մշակույթի նախարարության բարձրաստիճան ներկայացուցչի հետ. երկուստեք կարևորվեց հայ-չինական մշակութային համագործակցության ամրապնդմանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացումը: Չինացի գործընկերոջս կողմից առաջարկվեց նաև հաջորդող տարիների ընթացքում ընդլայնել համագործակցությունը թանգարանային ոլորտում՝ կազմակերպելով մասնագետների փոխայցելություններ և փոխադարձ ցուցահանդեսներ: Ողջունելով գործընկերոջս կողմից հնչեցված առաջարկը՝ նշեցի, որ հարցի շուրջ առարկայական քննարկումներ և պայմանավորվածություններ ձեռք բերելու համար անհրաժեշտ է ստեղծել երկկողմանի աշխատանքային խումբ:

Սեպտեմբերի 26-ին կայացավ ԷՔՍՊՈ-ի մասնակիցների գրանցումը, որին հաջորդեց մշակութային ծրագիրը: Պատվիրակները հնարավորություն ունեցան այցելելու Դունհուանի մշակութային օջախներ:

Սեպտեմբերի 27-ին կայացավ երրորդ միջազգային մշակութային ԷՔՍՊՈ-ի բացման պաշտոնական արարողությունը և մեկնարկեց պլենար նիստը: Միջոցառմանը հրավիրված էին մասնակցելու ավելի քան 30 պետությունների բարձրաստիճան պաշտոնյաներ, միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների ղեկավարներ, մշակութային գործիչներ: Ողջույնի խոսքով հանդես եկան ՉԺՀ պետական խորհրդի փոխվարչապետ Սուն Չունլանը և ՉԺՀ մշակույթի և զբոսաշրջության նախարար Լո Շուգանը: Բանախոսները կարևորեցին մշակույթի ոլորտի դրական ազդեցությունը միջպետական համագործակցության զարգացման տեսանկյունից:

Ելույթիս խոսքում ողջունեցի և շնորհակալություն հայտնեցի միջոցառման կազմակերպիչներին և ներկաներին, կարևորեցի հայ-չինական մշակութային համագործակցության ներկա բարձր մակարդակը և հույս հայտնեցի, որ առաջիկայում իրականացվելիք ծրագրերն էլ ավելի կնպաստեն երկու երկրների մշակութային համագործակցության խորացմանն ու ամրապնդմանը:

ՉԺՀ մշակույթի նախարարի հետ կայացած առանձնազրույցի ընթացքում երկու կողմերը բարձր գնահատեցին հայ-չինական մշակութային համագործակցության ներկա իրավիճակը և դրա շրջանակում վերջին տարիներին իրականացված միջոցառումները:

Սեպտեմբերի 28-ին բարձրաստիճան հյուրերի համար կազմակերպվեց մշակութային շրջայց:

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ մասնակցությունը երրորդ միջազգային մշակութային ԷՔՍՊՈ-ին հնարավորություն ընձեռեց գործընկերների հետ քննարկելու մշակութային համագործակցությանը վերաբերող հարցեր, ինչպես նաև ներկայացնելու Հայաստանը միջազգային հարթակում:

- ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- *Մասնակցություն Դունհուանում կայացած երրորդ միջազգային մշակութային ԷՔՍՊՈ-ի ծրագրային միջոցառումներին:*
- *Հայ մշակույթի հանրահռչակում արտերկրում միջազգային լայն լսարանի առաջ:*
- *Պայմանավորվածություն ձեռք բերվեց հաջորդող տարիների ընթացքում ընդլայնել համագործակցությունը թանգարանային ոլորտում՝ կազմակերպելով մասնագետների փոխայցելություններ և փոխադարձ ցուցահանդեսներ: Հարցի շուրջ առարկայական քննարկումներ և պայմանավորվածություններ ձեռք բերելու համար կստեղծվի երկկողմանի աշխատանքային խումբ:*